

Տեղի ունեցավ Արագածոտնի մարզխորհրդի նիստը

Մայիսի 17-ին տեղի ունեցավ Արագածոտնի մարզխորհրդի նիստ, որին ներկա էր ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարար Դավիթ Լոքյանը:

Մարզի համայնքների բյուջեների կատարման եւ սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի մասին զեկուցեց մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ա. Ավետիսյանը: Նա ասաց, որ ինչպես 2016 թվականի ողջ ընթացքում, այնպես էլ տարեկան ամփոփիչ տեղեկագրերով՝ սեփական եկամուտների հավաքագրումը գերազանցել է 100 %-ը, որի արդյունքում մարզը առաջինն է եղել հանրապետությունում :

Գործընթացը նույն հաջողությամբ շարունակվում է նաեւ այս տարի: 2017 թվականի մայիսի 1-ի դրությամբ սեփական եկամուտների հավաքագրվել է 236 միլիոն 165 հազար դրամ՝ կազմելով՝ 19,6 %: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է հավաքագրվել մոտ 16 միլիոն դրամ: Այդուհանդերձ, նա առանձնացրեց այն համայնքները, որոնց մոտ սեփական եկամուտների հավաքագրումը չի գերազանցում 10 տոկոսը:

Քննարկվեց նաեւ համայնքների զարգացման 5-ամյա ծրագրերի մասին հարցը: Զարգացման ծրագրերի բաժնի պետ Իշխան Բարսեղյանի տեղեկացմամբ՝ մարզի բոլոր՝ 114 համայնքներն էլ կազմել եւ հաստատել են իրենց զարգացման ծրագրերը: Ներկայումս համայնքների հետ վերանայվում են ծրագրերը՝ դրանք ավելի շահավետ դարձնելու նպատակով: Կառավարության կողմից արդեն իսկ հավանության է արժանացել ներդրումային 5 ծրագիր, իսկ 1 ծրագրի ֆինանսավորման գործընթացը սկսվել է:

Մարզպետի տեղակալ Մուշեղ Աբգարյանը խոսեց ,, Մաքուր Հայաստան,, ծրագրի շրջանակում իրականացվող աշխատանքների մասին: Նշվեց, որ մարզպետի կարգադրությամբ ստեղծված է հանձնաժողով, որը համակարգում է համայնքներում, մարզային եւ պետական նշանակության ճանապարհների հարակից տարածքներում իրականացվող մաքրման աշխատանքները: Մայիսի 6-ին կազմակերպվել է մարզային շաբաթօրյակ, իսկ մայիսի 27-ին մարզը կմասնակցի համապետական շաբաթօրյակին:

Ներկաները տեղեկացան նաեւ գյուղատնտեսական ոլորտում իրականացված աշխատանքների եւ ծրագրերի մասին:

ՏԿԶ նախարար Դավիթ Լոքյանն իր խոսքում շնորհակալություն հայտնեց մարզպետին եւ համայնքների ղեկավարներին՝ սեփական եկամուտների հավաքագրման գործընթացը լավագույնս կազմակերպելու համար, ինչի արդյունքում մարզի ցուցանիշներն առավելագույնն են եղել հանրապետությունում: Այս տարվա ամփոփագրերը վկայում են, որ

նույն միտումը շարունակվում է նաեւ այս տարի: Նախարարը նշեց, որ սա կարելու գործոն է համայնքների համար, քանի որ կառավարության նոր մոտեցումն այնպիսին է, որ գումարներների հատկացումները կատարվելու են՝ հաշվի առնելով հենց սեփական եկամուտների կատարման գործոնը:

Նախարարը առանձնակի կանգ առավ կրթության եւ առողջապահության ոլորտներում առկա հիմնախնդիրներին, նշելով, որ այս ուղղությամբ մարզի ղեկավարությունը հետեւողական աշխատանք է տանում, սակայն անելիքները դեռ շատ են: Այդ կապակցությամբ նախարարը տվեց հանձնարարականներ:

Քննարկված հարցերն ամփոփեց մարզպետ Գաբրիել Գյոզալյանը: Նա ներկայացրեց „Մաքուր Հայաստան,, ծրագրի շրջանակում արված եւ անելիք աշխատանքները, խոսեց համայնքների բարեկարգման, զարգացման իրատեսական ծրագրերի կազմման անհրաժեշտության եւ այլ հարցերի մասին: Անդրադառնալով կրթության եւ առողջապահության ոլորտներին, մարզպետը նշեց, որ դրանք իրենց ամենօրյա ուշադրության ներքո են: Պարբերաբար ուսումնասիրություններ, մոնիտորինգներ են կատարվում, համակարգի ղեկավարների հետ կազմակերպվում են քննարկումներ, տրվում են հանձնարարականներ:

Մարզխորհրդի նիստն ավարտվեց նախարարին եւ մարզպետին ուղղված՝ համայնքնապետերի հարցերով, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ եւ պարզաբանումներ:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին